

# «ԲԱՐԱՐՏ» ՓԲԸ

ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԻԾ

ՏՆՕՐԵՆ



Կ.ԳԻՂՅԱՆ

Կատարողների ցանկ՝  
Կատարող - Ա.Սաֆարյան  
“Ռադուզա” հաշվարկի կատարող՝ Է.Մելիքյան

## ԱՆՆՈՏԱՑԻԱ

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ գործունեության ընթացքում առաջացած արտանետումները:

- «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ փաստացի արտանետումների ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ) (հավելված-1), որի արդյունքում պարզվել է, որ`

- **ԱՀ-N-1** արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ<sup>3</sup> չափանիշը (**119.957մլրդ/մ<sup>3</sup>**), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

- **ԱՀ-N-2** արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ<sup>3</sup> չափանիշը (**133.2մլրդմ<sup>3</sup>/տարի**), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

- **ԱՀ-N-3** արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ<sup>3</sup> չափանիշը (**170.0մլրդմ<sup>3</sup>/տարի**), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

ՍԹԱ-ն գիտա-տեխնիկական նորմատիվ է, որն հաստատվում է յուրաքանչյուր աղբյուրի և արտանետվող յուրաքանչյուր նյութի համար, ձեռնարկությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցությունը սահմանափակելու նպատակով:

Աշխատանքի նպատակն է մշակել մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

ՍԹԱ նորմավորման աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 27.12.2012թ. “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին” թիվ 1673-Ն որոշումը:

Աշխատանքում ի մի են բերվել ձեռնարկության գործունեությունից առաջացող մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Ներկա աշխատանքում բերված են աղտոտման աղբյուրների տեխնիկական հետազոտման արդյունքների տվյալները՝ տեքստային և աղյուսակային տեսքով: Կատարված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցրման հաշվարկը:

Ձեռնարկությունն ունի երեք արտադրական հրապարակներ, Ա/Հ – N 1, 2, 3

- **Ա/Հ- N1** ունի մթնոլորտ աղտոտող 4 աղբյուր, որոնցից արտանետվում են 4 վնասակար նյութեր:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **12.380տ/տարի**:

<b>Փոշի անօրգանական(SiO<sub>2</sub> 20 -70%)</b>	<b>- 11.240տ./տարի</b>
<b>Կախված մասնիկներ (փոշի փայտի)</b>	<b>- 0.510տ./տարի</b>
<b>Ածխածնի օքսիդ</b>	<b>- 0.470տ./տարի</b>
<b>Ազոտի օքսիդներ(երկօքսիդի հաշվարկով)</b>	<b>- 0.160տ./տարի</b>

- **Ա/Հ - 2** ունի մթնոլորտն աղտոտող 2 աղբյուր որոնցից արտանետվում են 1 վնասակար նյութ:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **13.320 տ/տարի**, այդ թվում՝

**Փոշի անօրգանական (SiO<sub>2</sub> –20-70%)** - **13.320տ/տարի**

- **Ա/Հ - 3** ունի մթնոլորտն աղտոտող 2 աղբյուր որոնցից արտանետվում են 1 վնասակար նյութ:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **17.0 տ/տարի**, այդ թվում՝

**Փոշի անօրգանական (SiO<sub>2</sub> –20-70%)** - **17.0տ/տարի**

- **Ա/Հ- N 1** արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **1498392դրամ**, հաշվարկը տես հավելված 2-ում:

- **Ա/Հ- N 2** արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **1598400 դրամ**, հաշվարկը տես հավելված 2-ում:

- **Ա/Հ- N 3** արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **2040000դրամ**, հաշվարկը տես հավելված 2-ում:

ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը համարվում է հաստատման պահից:

## *ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ*

Անոտացիա	
1. Ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին	- 6
2. Տնտեսվարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր	- 7
3. Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը	- 10
4. Ջարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը եվ բնութագիրը	- 11
5. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը	- 12
6. ՍԹԱ նորմատիվների/չափաքանակների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները	- 20
7. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը	- 21
8. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները	- 22
9. Մթնոլորտ ամենամեծ աղտոտումներ առաջացնող աղբյուրների ցուցակը	- 23
10. ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր	- 24
11. Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու նորմատիվներ/չափաքանակներ	- 26
12. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ	- 27
13. Արտանետումների վերահսկման և ՍԹԱ կատարման նպատակով նախատեսվող և իրականացվող միջոցառումներ	- 28
- Օգտագործված գրականություն Հավելվածներ`	- 36
- ՕՊՕ-ի Հաշվարկը ըստ տվյալ ձեռնարկության-հավելված-1	- 29
- Վնասի հատուցման հաշվարկը -հավելված-2	- 31
Ձեռնարկության պլան-սխեման	
Ռելիեֆի գործակիցը	
Կլիմայական տվյալներ	
Ֆոնային աղտոտվածության տվյալներ	
Մեքենայական հաշվարկներ	

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ հիմնականում զբաղվում է քարի վերամշակման աշխատանքներով, շահագործում է Աճարկուտի ավազաքարային կրաքարի և Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայրերը:

Արտադրական գործողությունները կատարվում են երեք տարբեր տարացքներում, արտադրական հրապարակ N 1, 2, 3

**Արտադրական հրապարակ N 1** - հիմնականում կատարվում են քարի վերամշակման աշխատանքներ: Քարի վերամշակման արտադրամասը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի սկզբնամասում, Իջևան - Նոյեմբերյան ավտոմայրուղու 3-րդ կմ հատվածում, հեռու բնակելի տարածքից:

Ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն՝ ԲՓ-41, տրված 25.04.2006թ.

**Գործունեության հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ. ք. Իջևան, Արցախյան փողոց 120**

**Արտադրական հրապարակ N 2** - շահագործվում է Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայրը, որը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում Աճարկուտ գյուղից 0.5կմ հյուսիս-արևմուտք, Իջևան-Նոյեմբերյան ճանապարհի հարևանությամբ: Հեռու բնակելի տարածքից:

Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայրը ունի Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն թիվ ԲՓ – 103 տրված 25.08.2008թ.

**Գործունեության հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, գ. Գետահովիտ**

**Արտադրական հրապարակ N 3** - շահագործվում է Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայրը, որը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում, Քյորփլի գյուղից դեպի հյուսիս-արևելք 4-4.5 կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրն են Բազրադաշեն, Պտղավան գյուղերը և Այրումի ԵԳ կայարանը:

**Գործունեության հասցեն՝ Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայր:**

**Պետ.ռեգիստրի գրանցման համարը՝ 67.120.00799, տրված 26,11,2004թ**

**Իրավաբանական հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,  
Արցախյան 120**

**2. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՅՈՒԲԵԿՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՍԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ  
ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂԲՅՈՒՐ**

«ԲԱՐԱՐՏ» ՓԲԸ արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում հետևյալ պրոցեսները՝

**ԱՀ- N1 - Քարի վերամշակման արտադրամասը**

**ԱՀ- N 2 - Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայրը**

**ԱՀ - N 3 - Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայրը**

**Արտադրության բնութագիրը՝**

- ԱՀ - N1 - մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում հետևյալ գործընթացները՝

- **Բեռնաթափման հարթակը**
- **Քանդակագործական արտադրամասը**
- **Փայտամշակման արհեստանոցը**
- **Ջեռուցման կաթսան**

Քարի մեծ կտորները (սալերը) հանքից տեղափոխվում են բեռնաթափման հրապարակ, որտեղից հեծանային ամբարձիչով բերվում է քարի վերամշակման արտադրամաս և տեղադրում են կտրող հաստոցների վրա:

Նախատեսված է ըստ պատվերի քարի ձևավորման և ուղղահայաց կտրում, ինչպես նաև կտրված քարերի հղկում: Քարի մշակման հզորությունը կազմում է 500մ<sup>3</sup> / հերթափոխ կամ 264 հազ մ<sup>3</sup>/ տարի:

Քարի կտրման և հղկման բոլոր գործընթացները իրականացվում են ջրային միջավայրում կամ ջրի շիթի տակ, որը հնարավորություն է տալիս իջեցնելու արտանետվող փոշու քանակը: Մշակումը իրականացվում է "BARSANTI MACCHINE" ընկերության տեխնոլոգիայով և նույն ֆիրմայի արտադրության տեխնոլոգիական 2 հոսքագծերի (քարհատ հաստոցների) վրա:

Քարի մշակման արտադրամասերում հիմնականում պատրաստում են տարբեր մշակման աստիճանի սալեր, երեսպատման սալիկներ, քարակտորներ և այլն: Նշված գործընթացներից արտանետումներ չեն առաջանում:

- Արտանետման աղբյուր են հանդիսանում բեռնաթափման հրապարակը, ինչպես նաև քարի մշակման և քանդակագործական աշխատանքների կատարման ժամանակ առաջացած թափոնները, որոնք քամիների կողմից տարվելով առաջացնում են մթնոլորտային արտանետումներ:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 1 աղբյուրից:

- **Քանդակագործական արտադրամասում** պատրաստում են տարբեր տեսակի հուշարձաններ, որոնց հղկումը տաշումը և ձևավորումը կատարվում է ձեռքով:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 2 աղբյուրից:

- **Փայտամշակման արհեստանոցում** գործարանի կարիքների համար մշակում են 20մ<sup>3</sup> փայտանյութ: Տեղադրված է հորիզոնական ժապավենային սղոց:

Արտանետվում է փայտի փոշի N 3 աղբյուրից:

- **N1 արտադրամասի ջեռուցման** համար, տեղադրված են "IRFU" տիպի կաթսա, որը հիմնականում աշխատում է բնական գազով, (պահստային վառելիք չի նախատեսված) գազի տարեկան միջին ծախսը՝ 50հազ.մ<sup>3</sup>/տարի:

Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերը՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները արտանետվում են 13 մ բարձրությամբ և 0.3 մ տրամագծով ծխնելույզի միջոցով, արտանետման N 4 աղբյուրից:

- **ԱՀ- N 2 - Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայրի** արդյունահանումը իրականացվում է բաց եղանակով:

Հանքի շահագործման ժամանակ հիմնականում կատարվում է հանքից բլոկների և խճի արդյունահանման աշխատանքներ, արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնականում առաջանում են հետևյալ աշխատանքներից՝

- **Բացհանքի շահագործումից**
- **Թափոնների կուտակման հրապարակից**

Բացհանքի շահագործման ժամանակ աստիճանների բացումը կատարվում է միջհանքային մոտեցող կիսախրամների անցումով, բուլդոզեր - փխրեցուցիչի, ճոպանային քարհատ մեքենայի, էքսկավատորի միջոցով ավտոինքնաթափերի մեջ բարձմամբ, հանքում աշխատում են բուլդոզեր-փխրեցուցիչ, էքսկավատոր, անիվային բարձիչ, ավտոինքնաթափ, կոմպրեսոր:

Քիչ քանակությամբ արտանետումներ առաջանում են մեխանիզմների և ավտոմեքենաների աշխատանքներից, մեքենաներն աշխատում են դիզելային վառելիքով, որոնց արտանետումները չկարգավորված արտանետման աղբյուրներ են, որոնք ունեն չնչին արտանետումներ, այդ պատճառով էլ հաշվարկներում չեն ընդգրկվել:

Բացհանքի շահագործման ժամանակ առաջացած թափոնները, ինչպես նաև մակաբացման ապարների հեռացումը իրականացվում է բուլդոզերի օգնությամբ տեղափոխվում է հանքի եզրագծեր և արտաքին լցակույտեր՝ թափոնների կուտակման հրապարակ :



Այս գործընթացներում առաջանում է փոշի, որի մի մասը մեքենաների շարժումից, քամու կողմից տարվելով, դառնում են մթնոլորտային արտանետում:

Փոշու արտանետումները մեղմացնելու և նվազագույնին հասցնելու համար կատարվում է ջրցանման աշխատանքներ:

Նշված աշխատանքների ընթացքում արտանետվում է անօրգանական փոշի, N 1, 2 աղբյուրներից:

**ԱՀ - N 3 - Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայրը** արդյունահանումը իրականացվում է բաց եղանակով:

Հանքի շահագործման ժամանակ հիմնականում կատարվում է հանքից բլոկների արդյունահանման աշխատանքներ, որի արդյունահանումն իրականացվում է ներհատ, կտրիչ շղթայավոր և ալմաստաձուպանային քարհատ մեքենաների միջոցով:

Արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնականում առաջանում է հետևյալ գործընթացից`

Միաքարի անջատումը լեռնային զանգվածից կատարվում են քարհատ մեքենայի, իսկ միաքարի ընդերկայնական և ընդլայնական ուղղություննորով ուղղաձիգ հատումները կատարվում են "Надежда-2" մակնիշի ալմաստաձուպանային քարհատ մեքենայի միջոցով: Միաքարի մասնատումը ապրանքային բլոկների կատարվում են նույն մեքենաներով:

- **Միաքարի հեռացումը հանքախորշից** կատարվում է բուլդոզերի միջոցով;
- **Բլոկների բարձումը տրանսպորտային** միջոցների մեջ կատարվում ավտոմոբիլային կռունկի միջոցով, հանքում աշխատում են ավտոինքնաթափ, բուլդոզեր-փխրեցուցիչ, անիվային բարձիչ:

Նշված մեքենաներն աշխատում են դիզելային վառելիքով, որոնց արտանետումները չկարգավորված արտանետման աղբյուրներ են, որոնք ունեն չնչին արտանետումներ, այդ պատճառով հաշվարկներում չի ընդգրկվել:

Այս աշխատանքների ընթացքում արտանետվում է անօրգանական փոշի N 1 աղբյուրից:

Փոշու արտանետումները մեղմացնելու և նվազագույնին հասցնելու համար կատարվում է ջրցանման աշխատանքներ:

- Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը բերված են աղյուսակ 3-ում:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, ուստի աղյուսակ 3 հեռանկար սյունյակը չի լրացվում:

3. ՄՅՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԿՈՂ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ

ԱՐՅՈՒՍԱԿ 1

Նյութի անվանումը	Սթխ մգ/մ <sup>3</sup>	Արտանետումները տ/տարի
<i>Արտադրական հրապարակ N 1</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.3	11.240
Կախված մասնիկներ (փոշի փայտի)	0.5	0.510
Ածխածնի օքսիդ	5.0	0.470
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.2	0.160
<i>Արտադրական հրապարակ N 2</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.3	13.320
<i>Արտադրական հրապարակ N 3</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.3	17.0

Գումարային հատկության նյութեր չկան:

**4. ՋԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ  
ԹՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**ԱՂՅՈՒՍԱԿ 2.**

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը գ/զարկ	Արտանետման պարբերական ությունը, (անգամ/ տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Ջարկային արտանետումնե րի տարեկան քանակությունը, տոն.
1	2	3	4	5	6

Տեխնոլոգիական գործընթացից զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով աղյուսակ 2-ը չի լրացվել:

**5. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ**

**Աղյուսակ 3**

արտադրություն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները		Աշխատա- ժամը տարում		Արտանե- տման աղբյուր- ների անվանումը		Աղբյուր ների քանակը		Աղբյուրի կարգա- թիվը			
	Անվանումը		Քանակը									
			ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<
1	2		3	4	5	6	7	8	9	10	11	12
<b>Արտադրական հրապարակ N 1</b>												
<b>Բերնաթափման հարթակ, թափոնների կուտակման հրապարակ</b>	տեխնոլոգիա- կան գործընթաց		2		2080		անկազ- մա- կերպ		1		1	
<b>Քանդակագոր- ծական արտադրամաս</b>	քարի մշակման գործընթաց		2		2080		անկազ- մա- կերպ		1		2	
<b>Փայտամշակման արհեստանոց</b>	ժապավենային սղոց		1		1500		խողո- վակ		1		3	
<b>N1 արտադրամաս</b>	կաթսա		1		1920		խողո- վակ		1		4	
<b>Արտադրական հրապարակ N 2</b>												
<b>Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայր</b>	հանքի շահագործման գործընթաց		1		2000		անկազ- մակերպ		1		1	
	թափոնների կուտակման հրապարակ		1		3000		անկազ- մակերպ		1		2	
<b>Արտադրական հրապարակ N 3</b>												
<b>Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայր</b>	հանքի շահագործման գործընթաց		1		2120		անկազ- մակերպ		1		1	
	թափոնների կուտակման հրապարակ		1		3500		անկազ- մակերպ		1		2	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը, մ		Գագաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		ծավալը մ <sup>3</sup> /վրկ		ջերմաստիճանը	
ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
<i>Արտադրական հրապարակ N 1</i>											
1		4		30		4.0		2827.43		20	
2		7		5.0		4.0		78.54		20	
3		8		0.3		25.4		1.79		20	
4		13		0.3		11.4		0.806		100	
<i>Արտադրական հրապարակ N 2</i>											
1		3		100		3.0		23562.0		20	
2		3		50		3.0		5890.5		20	
<i>Արտադրական հրապարակ N 3</i>											
1		3		100		3.0		23562.0		20	
2		3		80		3.0		15079.6		20	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գագերը մաքրող սարքերի անվանումը		Մաքրվող նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2 -րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը %		Մաքրման առավելագույն չափը, %	
ՆԿ	<	X <sub>1</sub>	Y <sub>1</sub>	X <sub>2</sub>	Y <sub>2</sub>	ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<
<b>Արտադրական հրապարակ N 1</b>											
1		35	33	65	68						
2		25	30	30	35						
3		22	27	-	-						
4		75	36	-	-						
<b>Y<sub>0</sub>=100. X<sub>0</sub>=100 Արտադրական հրապարակ N 2</b>											
1		60	100	160	200						
2		120	50	170	100						
<b>Y<sub>0</sub>=150. X<sub>0</sub>=200 Արտադրական հրապարակ N 3</b>											
1		50	200	150	300						
2		70	220	150	300						

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հասնելու տարին
		ՆԿ			Հ (ԱԹԱ)			
		գ/վրկ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	գ/վրկ	մգ/մ <sup>3</sup>	տ/տարի	
<b>Արտադրական հրապարակ N 1</b>								
1	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.200	0.42	8.980	1.200	0.42	8.980	2017
2	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.302	3.85	2.260	0.302	3.85	2.260	2017
3	Կախված մասնիկներ (փոշի փայտի)	0.095	52.91	0.510	0.095	52.91	0.510	2017
4	Ածխածնի օքսիդ	0.068	84.39	0.470	0.068	84.39	0.470	2017
	Ազոտի օքսիդներ	0.024	29.78	0.160	0.024	29.78	0.160	
<b>Արտադրական հրապարակ N 2</b>								
1	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.400	0.06	10.080	1.400	0.06	10.080	2017
2	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.300	0.05	3.240	0.300	0.05	3.240	2017
<b>Արտադրական հրապարակ N 3</b>								
1	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.507	0.06	11.500	1.507	0.06	11.500	2017
2	Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.437	0.03	5.500	0.437	0.03	5.500	2017

ՆԿ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկար


Ս Խ Ե Մ Ա

Վնասակար նյութերի արտանետման աղբյուրների

«ԲԱՐԱՐՏ» ՓԲԸ

Մ 1 : 1000


Արտադրական հրապարակ N 1






**Տեղադրման Հատակագիծ**

**Արտադրական հրապարակ N 1**






- ԱՆՎԱՆԱՑԱՆԿ**
- Արմատուղնադանային բարիաբ մեքենա
  - Ավտոյինքնաթափ
  - Ավտոկայան
  - Բուլդոզեր
  - Անիվային բարձիչ
  - Բլոկներ
  - Թափոններ

Արտատրական հրատարակ N 2

Օրյելտների անվանացանկը  
և պայմանական նշանները  
տես թերթ L-3, 4

«ՔԱՐԱՊ»		ՔԱՐԱՊԻ ՍԿԱՆԱՅԻՆ ԿՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ	
«ՔԱՐԱՊ»		ՔԱՐԱՊԻ ՍԿԱՆԱՅԻՆ ԿՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ	
Տնօրեն	Է. Գիշտե	ՔԱՆՈՒՄ	Փույլ
Նախ. տեղ.	Վ. Տարաբուրյան		Ա.Ն.
		ՔԱՆՈՒՄ	Մ/Յ
		թերթ L-9	թերթեր - 14
		Լեռնային ճառ	



Արտադրական հրապարակ N 3		Քյորփլիի ֆելդիտային տուֆերի հանքավայր		
«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ		Կրկնաշրջանի հրապարակ N 3		
	Ա.Ա.	ստորագր.		
	«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ			
Տնօրեն	Կ. Գիշյան			
Նախ. հեղ.	Կ. Գանբարձույան			
			ԲԱՅԱՅԱՆՔ	Շիֆր
			ընդլայնում	Փուլ
				Ն.
				Մ
				1:2000
			Լեռնային մաս	

**6. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ /ԶԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՒԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ԲՕՇ 17.2.3.02-78- ին համապատասխան և բերված են 3 աղյուսակում: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, մաքրման դեպքում՝ 2:



**7. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ**

**ՀԱՇՎԱՐԿԸ**

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները:

Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Ռադուգա» մեքենայական ծրագրով, որը առաջարկված է օգտագործման նախկին ԽՍՀՄ Հիդրոմետ Պետական Վարչության կողմից:

Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է  $1000 \times 1000$ մ քառակուսում, 100մ քայլով:

**ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

**Աղյուսակ 4**

<b>ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>ԱՐԺԵՔԸ Ա/Հ-1.2.3</b>
Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A	200
Տեղանքի ռելյեֆի գործակիցը	1.25
Տարվա ամենաշոգ ամսվա միջին ջերմաստիճանը T °C	22.2°C
Միջին տարեկան «քամիների վարդը» % -ով	
Հյուսիս	3
Հյուսիս-արևելք	24
Արևելք	11
Հարավ-արևելք	1
Հարավ	1
Հարավ-արևմուտք	50
Արևմուտք	4
Հյուսիս-արևմուտք	6
Քամու արագությունը, (բազմամյա տվյալների միջինը),որի գերազանցման կրկնությունը կազմում է 5% մ/վրկ	5մ/վրկ

## **8. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱԿԻՐՃ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ :

Ձեռնարկության արտանետումները տվյալ տեղանքի ֆոնային աղտոտվածության հետ չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում:

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում է բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի. տես աղյուսակ 4.1, 5.:

**Ա/Հ-1.** Ֆոնային աղտոտվածության տվյալները վերցվել են ՀՀ բնապահպանության նախարարության կայք էջից՝ ըստ բնակչության թվաքանակի կատարված հաշվարկի՝ փոշի -  $0.3 \text{ մգ/մ}^3$ , (փոշու ֆոնի տվյալները ներկայացված է  $0.5 \text{ մգ/մ}^3$  ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), ազոտի երկօքսիդ-  $0.015 \text{ մգ/մ}^3$ , ածխածնի օքսիդ -  $0.8 \text{ մգ/մ}^3$ ,

**Ա/Հ-2.** 3 Ֆոնային աղտոտվածությունը հաշվարկված են ըստ բնակչության թվաքանակի կատարված հաշվարկի՝ փոշի -  $0.2 \text{ մգ/մ}^3$  (փոշու ֆոնի տվյալները ներկայացված է  $0.5 \text{ մգ/մ}^3$  ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), ազոտի երկօքսիդ -  $0.008 \text{ մգ/մ}^3$ , ածխածնի օքսիդ -  $0.4 \text{ մգ/մ}^3$ , սական նշված նյութերը հաշվարկներում չունենք, այդ պատճառով ֆոնով չի հաշվարկվել:

**9. ՄՅՆՈՒՈՐՏԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏՈՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ  
ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

**Աղյուսակ 4.1**

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ խտությունը մգ/մ <sup>3</sup>		Աղբյուրի կարգաթիվը	Ներդրումը %		Արտադրա-մաս, տեղամաս
	առանց ֆոնի	ֆոնով		առանց ֆոնի	ֆոնով	
1	2	3	4	5	6	7
<b>Արտադրական հրապարակ N 1</b>						
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.102	-	2	94.31	-	Քանդակագործական արտադրամաս
Կախված մասնիկներ (փոշի փայտի)	0.112	0.411	3	100	27.14	Փայտամշակման արհեստանոց
Ածխածնի օքսիդ	0.027	0.827	4	100	3.29	կաթսա
Ազոտի օքսիդներ	0.01	0.025	4	100	39.07	-//-
<b>Արտադրական հրապարակ N 2</b>						
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.0026	-	1	60.16	-	Հանք
<b>Արտադրական հրապարակ N 3</b>						
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	0.0025	-	1	68.61	-	Հանք

Ձեռնարկության արտանետումները տվյալ տեղանքի ֆոնային աղտոտվածության հետ չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԽ

10. ՍՅԱՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ ՀԱՄՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 5

N N ը / կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականաց- ման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Արտադրական հրապարակ N 1

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO<sub>2</sub> 20 -70%)

1	1	2017	1.200	8.980	1.200	8.980
2	2	2017	0.302	2.260	0.302	2.260
	<b>Ընդամենը</b>	<b>2017</b>	<b>1.502</b>	<b>11.240</b>	<b>1.502</b>	<b>11.240</b>

ԿԱՆՎԱԾ ՄԱՍՆԻԿՆԵՐ (փայտի փոշի)

1	3	2017	0.095	0.510	0.095	0.510
---	---	------	-------	-------	-------	-------

ԱԾԽԱԾՆԻ ՕՔՍԻԴ

1	4	2017	0.068	0.470	0.068	0.470
---	---	------	-------	-------	-------	-------

ԱՋՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐ

1	4	2017	0.024	0.160	0.024	0.160
---	---	------	-------	-------	-------	-------

Արտադրական հրապարակ N 2

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO<sub>2</sub> 20 -70%)

1	1	2017	1.400	10.080	1.400	10.080
2	2	2017	0.300	3.240	0.300	3.240
	<b>Ընդամենը</b>	<b>2017</b>	<b>1.700</b>	<b>13.320</b>	<b>1.700</b>	<b>13.320</b>



*Արտադրական հրապարակ N 3*

**ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO<sub>2</sub> 20 -70%)**

1	1	2017	1.507	11.500	1.507	11.500
2	2	2017	0.437	5.500	0.437	5.500
	<b><i>Ընդամենը</i></b>	<b><i>2017</i></b>	<b><i>1.944</i></b>	<b><i>17.0</i></b>	<b><i>1.944</i></b>	<b><i>17.0</i></b>

Քանի որ արտանետումները չեն առաջացնում գերնորմատիվային աղտոտվածություն, չի նախատեսվում արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, այդուսակ 5-ը լրացվում է համաձայն փաստացի չափաքանակների, որոնք առաջարկվում են որպես ՍԹԱ նորմատիվներ:

11. ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՈՐՏ  
ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ «ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ /ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

ԱՂՅՈՒՄԱԿ 6.

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումները	
	գ/վրկ	տ/տարի
<i>Արտադրական հրապարակ N 1 Քարի վերամշակման արտադրամաս</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.502	11.240
Կախված մասնիկներ ( փոշի փայտի)	0.095	0.510
Ածխածնի օքսիդ	0.068	0.470
Ազոտի օքսիդներ	0.024	0.160
<i>Արտադրական հրապարակ N 2 Աճարկուտի ավազաքարային կրաքարի հանքավայր</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.700	13.320
<i>Արտադրական հրապարակ N 3 Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայր</i>		
Փոշի անօրգանական (SiO <sub>2</sub> 20 -70%)	1.944	17.0

**12 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Չբեռնավորել և չդատարկել լուծիչներ և հեշտ բոցավառվող բռնկվող նյութեր
4. Սահմանափակել վառելիքի մատակարարումը
5. Սահմանափակել փոշու արտանետումը
6. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

**13. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է ձեռնարկությունը, արտանետումներին հետևում և ստուգում է բնության պահպանության համար պատասխանատու անձը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ վնասակար նյութերի խտությունների և գազերի օդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների անհնարինության դեպքում թույլատրվում է տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում օգտագործվել է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, բնակչության առողջության համար վնասաբեր մթնոլորտի աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է վնասակար նյութերի արտանետումները իջեցնել ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում ՍԹԱ -ի նորմատիվը գերազանցվում է, ձեռնարկությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին և անհապաղ միջոցներ ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ, ինչպես նաև «ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչություն» տեղեկատվություն հաղորդել վթարի և ձեռնարկված միջոցառումների մասին:

**«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ ՕՊՕ-ի ՀԱՇՎԱՐԿԸ**

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են այն արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում գերազանցում է երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը կամ վայրկյանում գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը: Այն կազմակերպությունները, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ, և նրանց նախագծային առավելագույն արտանետումները պետք է բավարարեն հետևյալ պայմանը՝

$$\text{ՕՊՕ տարեկան} = \sum \frac{n U_i}{i U_{\text{ԹԿ}_i}} > 2 \text{ մլրդ խոր. մ/տարի, որտեղ՝}$$

ՕՊՕ տարեկան-ը օդի պահանջվող օգտագործումն է՝ տարեկան կտրվածքով,  
 -  $U_i$ -ն  $i$ -րդ նյութի տարեկան առավելագույն արտանետումն է՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հաստատված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի կամ տեխնոլոգիական ռեգլամենտի՝ մգ/տարի,

-  $U_{\text{ԹԿ}_i}$ -ն  $i$ -րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է՝ մգ/խոր. մ:

**Ա/Հ-Ն-1 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝**

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 0.1մգ/մ<sup>3</sup>, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 11,240 տ/տարի:

- Կախված մասնիկների համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 0.15մգ/մ<sup>3</sup>, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 0,510տ/տարի:

- Ածխածնի օքսիդի համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 3 մգ/մ<sup>3</sup>, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 0,470տ/տարի:

- Ազոտի օքսիդների (երկօքսիդի հաշվարկով) համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկանը 0.04 մգ/մ<sup>3</sup>, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում 0,160 տ/տարի:

$$\text{ՕՊՕ} = (11,240 \times 10^9) : 0.1 + (0,510 \times 10^9) : 0.15 + (0,470 \times 10^9) : 3 + (0,160 \times 10^9) : 0.04 = 119.957 \text{ մլրդ/մ}^3$$

ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ<sup>3</sup> շեմը (119.957 մլրդ/մ<sup>3</sup>), ապա ընկերությունը պետք է մշակի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

**Ա/Հ-N-2 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝**

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա  $0.1\text{մգ}/\text{մ}^3$ , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է  $13.320$  տ/տարի:

$$\text{ՕՊՕ} = (13.320 \times 10^9) : 0.1 = 133.2\eta \text{ մ}^3/\text{տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է  $2$  մլրդ/ $\text{մ}^3$  շեմը ( $133.2\eta\text{մ}^3/\text{տարի}$ ), ապա ընկերությունը պետք է մշակի ահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

**Ա/Հ-N-3 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝**

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա  $0.1\text{մգ}/\text{մ}^3$ , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է  $17.0$  տ/տարի:

$$\text{ՕՊՕ} = (17.0 \times 10^9) : 0.1 = 170.0\eta \text{ մ}^3/\text{տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է  $2$  մլրդ/ $\text{մ}^3$  շեմը ( $170.0\eta\text{մ}^3/\text{տարի}$ ), ապա ընկերությունը պետք է մշակի ահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

**«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծության հաշվարկ**

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, բնությանը հասցված վնասի հատուցման հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի», հաստատված 21.01.2005թ. թիվ N 91-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ,

«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ կողմից հասցված վնասի մեծության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով`

**ԱՀ-N-1**

**1. Փոշի անօրգանական(SiO<sub>2</sub> 20 -70%) համար**

$$U_1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum p_1 \cdot v_1$$

որտեղ`

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

$v_1$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է` փոշի անօրգանական - 10

$p_1$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$p_1 = q \cdot / 3S_{ա2} - 2U_{թԱ} /$$

որտեղ`

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$  - տվյալ նյութի արտանետման քանակն է` փոշի անօրգանականի համար -

**11,240տ/տարի**

$$p_1 = 1 \cdot / 3 \cdot 11,240 - 2 \cdot 0 / = 33,72$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը **անօրգանական փոշու** համար կկազմի`

$$U_1 = 4 \cdot 1000 \cdot 33,72 \cdot 10 = 1348800 \text{դրամ}$$

**2. Փայտի փոշու համար**

$$U_1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum p_2 \cdot v_2$$

որտեղ`

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

$v_2$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է` - փայտի փոշի – 19,6

$p_2$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$p_7 = q \cdot / 3S_{ա2} - 2U_{թԱ} /$$

որտեղ`

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$  - տվյալ նյութի արտանետման քանակն է` փայտի փոշու համար – **0,510տ./տարի**

$$p_1 = 1 \cdot / 3 \cdot 0,510 - 2 \cdot 0 / = 1.53$$

Համաձայն վերոնշվածի, փայտի փոշու վնասի հատուցումը կկազմի`

$$U_2 = 4 \cdot 1000 \cdot 1.53 \cdot 19,6 = 119952 \text{դրամ}$$

### 3. Ածխածնի օքսիդի համար՝

$$U_3 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum P_3 \cdot U_3$$

որտեղ՝

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

$U_3$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ - ածխածնի օքսիդ - 1

$P_3$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$P_3 = q \cdot / 3S\omega_2 - 2U\theta U /$$

որտեղ՝

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S\omega$  - տվյալ նյութի արտանետման քանակն է՝ ածխածնի օքսիդի համար – *0,470տ/տարի*

$$P_3 = 1 \cdot / 3 \cdot 0,470 - 2 \cdot 0 / = 1,41$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ածխածնի օքսիդի համար կկազմի՝

$$\underline{U_3 = 4 \cdot 1000 \cdot 1,41 \cdot 1 = 5640 \text{ դրամ}}$$

### 4. Ազոտի օքսիդի համար

$$U_4 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum P_4 \cdot U_4$$

որտեղ՝

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

$U_4$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ - ազոտի օքսիդ - 12,5

$P_4$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$P_4 = q \cdot / 3S\omega_1 - 2U\theta U /$$

որտեղ՝

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S\omega$  - տվյալ նյութի արտանետման քանակն է՝ ազոտի օքսիդի համար – *0,160տ./տարի*

$$P_3 = 1 \cdot / 3 \cdot 0,160 - 2 \cdot 0 / = 0,480$$

Համաձայն վերոնշվածի, ազոտի օքսիդի վնասի հատուցումը կկազմի՝

$$\underline{U_4 = 4 \cdot 1000 \cdot 0,480 \cdot 12,5 = 24000 \text{ դրամ}}$$

$$U = U_1 + U_2 + U_3 + U_4 = 1348800 + 119952 + 5640 + 24000 = 1498392 \text{ դրամ}$$

Ընդհամենը վնասի մեծությունը կազմում է 1498392 դրամ



## Ա/Հ-N-2

### 1. Փոշի անօրգանական( $\text{SiO}_2$ 20 -70%) համար

$$U_1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum p_1 \cdot V_1$$

որտեղ՝

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

$V_1$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ փոշի անօրգանական - 10

$p_1$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$p_1 = q \cdot / 3S_{ա_2} - 2U_{\theta U} /$$

որտեղ՝

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$  - տվյալ նյութի արտանետման քանակն է՝ փոշի անօրգանականի համար – **13.320տ/տարի**

$$p_1 = 1 \cdot / 3 \cdot 13.320 - 2 \cdot 0 / = 39.96$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ածխածնի օքսիդի համար կկազմի՝

$$U_1 = 4 \cdot 1000 \cdot 39.96 \cdot 10 = 1598400 \text{դրամ}$$

Ընդհամենը վնասի մեծությունը կազմում է 1598400դրամ

## Ա/Հ-N-3

### 1. Փոշի անօրգանական( $\text{SiO}_2$ 20 -70%) համար

$$U_1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum p_1 \cdot V_1$$

որտեղ՝

$\zeta q$  - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

$\Phi g$  - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

$V_1$  – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ փոշի անօրգանական - 10

$p_1$  – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$p_1 = q \cdot / 3S_{ա_2} - 2U_{\theta U} /$$

որտեղ՝

$q$  - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$  - տվյալ նյութի արտանետման քանակն է՝ փոշի անօրգանականի համար – **17.0 տ/տարի**

$$p_1 = 1 \cdot / 3 \cdot 17.0 - 2 \cdot 0 / = 51.0$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ածխածնի օքսիդի համար կկազմի՝

$$U_1 = 4 \cdot 1000 \cdot 51.0 \cdot 10 = 2040000 \text{դրամ}$$

Ընդհամենը վնասի մեծությունը կազմում է 2040000դրամ

ՌԵԼԻԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿ  
«ՔԱՐԱՐՏ» ՓԲԸ  
Արտադրական հրապարակ N 1

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$H = 13$ մ - արտանետման ամենաբարձր աղբյուրը

$H_0 = 200$ մ - տեղանքի բարձրությունը

$X_0 = 2400$ մ - արգելքի կենտրոնից մինչ ձեռնարկություն ընկած  
հեռավորությունը

$\varphi_1$ - արգելքի եզրի կիսաբայլը

$a_0 = 2000$

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1)$$

Գտնել  $n_1$  և արժեքները

